

---

---

ԴԻՄԱԿԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՄԱՐԻ ԶԱՔԱՐՅԱՆ

*XX դարի 10–20-ական թվականներին մարդկությունը ականատեսն էր արժեքային համակարգի հարահոս այնպիսի փոփոխությունների, որոնք հանգեցրել էին տեղային և համաշխարհային տարաբնույթ հեղափոխությունների (սոցիալական, գիտատեխնիկական, սեքսուալ), պատերազմների: Այս ամենն էլ պայմանավորեց ազգային գաղափարների անկումը: Համամարդկային արժեքների, նրա կառուցվածքում հայ հոգևոր մշակույթի իրատես համադրման առումով նշված ժամանակահատվածում մարդկության առջև ծառայելով Առաջին համաշխարհային պատերազմը, որին հաջորդեցին հայկական, հունական, ասորական նախճիրները: Այս աշխարհացունց իրադարձությունների հենքի վրա էլ հասկանալի ու բացահայտ է դառնում Արևմուտքի մարդու՝ «ես»-ի բազմաչափ ու դիմակավոր լինելը, և գրականությանը զբաղեցնող հիմնահարցը դարձավ իր ժամանակակից գոյաբանական հարցի տարաշերտ քննարկումը:*

*Վերածննդի և լուսավորականության դարաշրջաններում, ժամանակի մտայնությամբ թելադրված, արևմտյան քաղաքակրթությունը որդեգրել էր սոցիալական անսպառ նորարարությունների ոգին, և առկա տնտեսական հարաբերությունների արդյունքում ձևավորվեց նոր՝ տնտեսական մարդը: Ազատվելով ավանդական սահմանափակումներից՝ նա հնարավորություն ստացավ որդեգրելու համամարդկային արժեքների բազմաչափությունը: Այդ նույն ժամանակահատվածի քաղաքական մարդը, սակայն, իշխանական հարաբերություններում հնարավորինս բարձր տեղ ու դիրք գրավելու նպատակների հետամուտ, ազգային գաղափարները ներառեց քաղաքական խաղի կառուցվածք՝ այն դարձնելով քաղաքական փոփոխությունների բաղկացուցիչ գործոն: Նորագույն՝ պոստմոդերնի ժամանակաշրջանում ձևավորվեց խաղացող մարդը (homo ludens)՝ իր սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և գիտատեխնիկական արժեքային բազմաչափությամբ: Նա ազգային ինքնության քննությունը տեղափոխեց հնարավոր (վիրտուալ) իրականության հարթություն՝ իշխանական հարաբերությունները դարձնելով եզրութային, լուսանցքային: Քաղաքականությունը, աստիճանաբար վերածվե-*

---

<sup>1</sup> Մարդ, անհատ, անհատականություն բառերը ծագել են լատիներեն persona բառից, որը նշանակում է դիմակ: Հույն դերասանների հետևությամբ այն կրել են նաև հոռոմեացի արտիստները: Մրդի հետազոտողների կարծիքով persona բառը ծագել է էտրուսկերեն fersu (դիմակ) բառից (Б. Ю. Щ е р б а к о в. Парадигмы современного образования: человек и культура. М., 2001, с. 99):

լով սեփական զարգացման տրամաբանությամբ կառավարվող հասարակական հարաբերությունների ինքնուրույն ոլորտի, դառնում է հարատև փոփոխությունների թատերաբեմ՝ ներառելով ազգային արժեքային ինքնությունը: Նոր՝ խաղացող մարդը, Աստծո կողմից տրված ժամանակն ընկալում է որպես կազմակերպված խաղ: Դա ոչ թե Հ. Հեսսեի «Խաղ ուլունքաշարով» գրքի<sup>2</sup> հերոսի հասկացած խաղն է՝ շրջապատի աշխարհից կտրված, մարդկանց հետ խորհրդանշական պատկերացումներով հարաբերվող, այլ խաղ էր ըստ Բ. Հյոյզինգի, համաձայն որի՝ այն ներկայացնում է մարդկային գործունեության և կեցության համընդհանրությունն ու հարաբերական անկախությունը: Նման խաղը վերաբերում է ամեն ինչին, այդ թվում նաև խոսքին: Խոսքի մեծ վարպետներն էլ, նման նկատառումներից ելնելով, գաղափարները, պատկերներն ու նկարագրությունները վերարտադրում են ճկուն մտածողությամբ՝ ստեղծելով լեզվական խաղ: Կարելի է պնդել, որ դիմակը<sup>3</sup> բառաստեղծ ոգին է, որը, որպես խաղ, նյութական և մտավոր աշխարհների միջև կառուցում է յուրօրինակ կամուրջ, որի օգնությամբ մարդը, իրականությունից վերկանգնելով, կարողանում է ստեղծել ապագայի հերոսի կերպարը. «Խաղը «առօրյա» կամ «ներկա» կյանքը չէ. դա մուտք է դեպի այնպիսի կյանք, որը ենթադրում է սեփական մղումներով գործողություն»՝ հավաստում է Բ. Հյոյզինգը<sup>4</sup>: Այս առումով էլ հարկ է դիտարկել դիմակը որպես լեզվամտածողության խաղ, որի հիմնական նպատակը գործողության ընկալումն է լեզվական միջոցներով: Գրականությունը խաղ է համարում նաև արգենտինացի աշխարհահռչակ գրող Խ. Կորտասարը. «... Գրականությունը իմ խաղի տարածքն է: Ես ... խաղում եմ լուրջ»<sup>5</sup>: Խաղը մարդկային կեցության կառուցվածքային հիմքն է, հետևաբար, դրանով պայմանավորված, դիմակավոր «ես»-ը, ազգը, հասարակությունը, իրենց տրված ժամանակի և տարածության մեջ արդիականացնում են սեփական տեսակը:

XX դ. 10–20-ական թվականների դաժան իրադարձությունների պատճառ հանդիսացող բազմաչափ «ես»-ին, միմյանցից անկախ, անդրադառնում են դարի մեծ անհատականությունները, որոնք շահագրգռված էին համամարդկային արժեքների հաղթանակով: Այդ բազմաչափ «ես»-ի քննարկմանն են անդրադարձել ռուս պոեզիայի վարպետները՝ Վ. Բրյուսովը, Ալ. Բլոկը, Ս. Եսենինը և ուրիշներ: Սակայն նշենք նաև, որ դարի գաղափարական հոսանքներից և ոչ մեկը չկարողացավ ժամանակի պահանջներին համահունչ կերպարի ստեղծել, դիմակայել պրոլետարական գրականությանը, և վերջին հաշ-

<sup>2</sup> Г. Г е с с е. Игра в бисер. Новосибирск, 1991.

<sup>3</sup> Ռուսական հին հանրագիտարաններում դիմակին (мимикрия) նվիրված հոդվածներում հեղինակներն անդրադարձել են կենդանիների՝ գոյության պայքարով թելադրված դիմակավորմանը. մարդ էակի՝ որպես մեծ բնության զավակի դիմակավորումը նկատի չեն առել (Энциклопедический словарь Русского библиографического института Гранат, т. 28, М., II изд., с. 667; Энциклопедический словарь, т. 30, изд. Ф. А. Брокгауз (Лейпциг), И. А. Эфрон. СПб., с. 671):

<sup>4</sup> Й. Х ё й з и н г. Homo Ludens (Человек играющий. Статьи по истории культуры. Пер. с нидерландского и сост. Д. В. Сильвестрова). М., 2003, с. 22.

<sup>5</sup> Julio Cortazar. Estoy jugando en serio..., Ensayos, cuentos, Entrevistas, Barcelona, 1994, p. 353.

վով՝ բոլշևիզմին, իսկ վերջինս էլ իր՝ երկխոսության չզնացող կեցվածքով, պրոլետարական «ես»-ի մեջ մերժելով ազգայինը, կողմնորոշվեց դեպի համաշխարհային հեղափոխություն: Ազգայինը մերժելով՝ այն սկսեց ծառայեցնել համաշխարհային պրոլետարիատի ոչ իրատես շահերին:

Վերոհիշյալ հանգամանքներով պայմանավորված՝ ժամանակի մեծագույն ստեղծագործողները սկսում են առանձնակի ուշադրության արժանացնել կերպափոխման երևույթին՝ դիմակափոխմանը:

«Բազմաչափություն» եզրը մի դեպքում ենթադրում է, որ ազգային, սոցիալ-մշակութային որոշակի ժամանակ և տարածություն անցած «ես»-ը կարողանում է ժամանակին կողմնորոշվել կամ զուգամիտել ու համադրել իր տնտեսական, քաղաքական եզրերը, իսկ երկրորդ դեպքում՝ երկրի, ժողովրդի հիմնահարցերը լուծելու համար «ես»-ը կարողանում է ճիշտ ժամանակին կերպափոխվել՝ դիմակավորվելով: Այսօրվա՝ XXI դ. հայ կյանքին զբաղեցնող և հուզող հարցը հայ մարդու, քաղաքացու, ժողովրդի և վերջապես «ես»-ի բնաշրջական զարգացմանը համահունչ կերպափոխումն է ժամանակի պահանջներին համապատասխան, և թվում է՝ այս է նաև արդի հայ բանասիրությանը զբաղեցնող հիմնահարցը: Այս առումով էլ փորձենք դիտարկել ու մեկնաբանել՝ ինչպես են հայ գրական մեծերը փորձել պատասխանել իրենց ժամանակի քաղաքական մարտահրավերներին: Այս առումով ուշագրավ է Ավ. Բասահայանի ստեղծագործության քննությունը, քանի որ նա՝ Բասահայան մարդը և քաղաքացին՝ ազգային հենքով և եվրոպական կրթությամբ, իր ապրած բարդ ու հարափոփոխ ժամանակաշրջանում դիտարկում էր «ես»-ի բազմաչափության հարցը:

1903–1905 թթ. արևելահայության համար ծանր տարիներ էին. ցարական հայահալած քաղաքականությունը առավելագույնս խստացվեց: Փոխարքա իշխան Գոլիցինը հայատյաց հերթական չարիքն էր նյութում հայ ժողովրդի դեմ: Հայկական դպրոցները, մշակութային օջախները փակելուց հետո խլվեց նաև հայ եկեղեցու ունեցվածքը, որ դարեր ի վեր Էջմիածնի կաթողիկոսարանին էր պատկանում: Ռուսական արքունիքը, ցարական պաշտոնյաները հայտարարում էին, որ հայ ժողովուրդը հեղափոխական է, ձգտում է Ռուսաստանից անջատվել, նպատակ ունի իր պետությունը հիմնադրել Կիլիկիայից Դոնի Ռոստով՝ Նոր Նախիջևան: Մամուլը արդարացնում էր հայերի նկատմամբ պետության վարած դաժան քաղաքականությունը: Սոցիալական լարվածությունը մեղմելու նպատակով ցարական հատուկ ծառայությունները թուրք խուժանին հրահրեցին հայերի դեմ, և սկսվեցին հայ-ադրբեջանական արյունոտ ընդհարումները: Ռուս-ճապոնական պատերազմին հաջորդեց 1905–1907 թթ. ռուսական բուրժուադեմոկրատական որակված հեղափոխությունը, և արդեն իսկ հասկանալի էր, որ իր ճակատագիրը Ռուսաստանին միակցած հայ ժողովրդին, մասնավորապես Հայկական հարցի լուծման գործում լուրջ փորձություններ էին սպասվում: Հայ քաղաքական առաջնորդներն այն համոզմանն էին, որ քրիստոնյա Եվրոպան և Ռուսաստանը պարտավոր են փրկել հայ ժողովրդին թուրքական հոշոտումից: Պարզ էր դառնում, որ չկերպափոխված, չդիմակավորված մշակութային կողմնորոշումը քննություն

չի բռնում, և այս պատճառով էլ Բսահայկյանն այլաբանության է դիմում՝ համոզված, որ գուտ ազգային նախակերպարների (արխետիպ) հենքի վրա զարգացող մշակույթը միաշափ վերաբերմունք է հանդես բերում համաշխարհային քաղաքական զարգացումների հանդեպ, և հայ մարդը XX դարի մարտահրավերներին, համաշխարհային քաղաքական զարգացումներին չի կարողանում պատասխանել: «Հսկայական փոփոխություններ առաջ եկան, ուշագրավ երևույթներ: Եվ հանրածանոթ իրողություն է, որ այս դեպքերը զարգացան բոլորովին հակառակ մեր տրամադրությանց՝ արտաքին իրողությունների թելադրությամբ: Մենք անգոր եղանք ուղղություն տալ նրանց: Այս նշանակում է, թե ներքուստ մենք պատրաստ չէինք դեպքերի իմաստը հասկանալու, զանոնք մեր քաղաքական ձգտումներին համընթաց դարձնելու»<sup>6</sup>, – հետագայում խոստովանում է մեծ գորավար Գ. Նժդեհը: Իր ժամանակի քաղաքական իրադարձությունների զարգացումը Բսահայկյանը հանգեցնում է կերպարիտիման (տրանսֆորմացիա) գաղափարին: Թվում է՝ վարպետը օրագրերում բացարձակ ճշմարիտ ուղի է մատնանշում. ազգային-ազատագրական պայքար կամ ինքնուրույն պետականության ձգտում ասելով ամեննին չպետք է հասկանալ միմիայն զինված պայքար ու պատերազմ, որոնք ցանկացած ժողովրդի, առավել ևս հայ ժողովրդի համար ամենսանցանկալին են, և միմիայն ծայրահեղ դեպքում կարող են դրանք անհրաժեշտություն դառնալ:

Դիմակի այլաբանական ընկալումներն ազգային գրականության մեջ նորություն չեն. հայ արժեքային համակարգը ժամանակի հետ կորցրել էր իրականությունը դիմակավորված ընկալելու իր կապը անցյալի հետ: Այն առկա էր ինչպես Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ, այնպես էլ Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմում: Այս վերջինում մարդը իր առաքիլության, սիրո ու բարու, պահանջմունքների բավարարման ակնկալիքներով, իր «ես»-ի ինքնահաստատման, ինքնամաքրման տրամադրվածությամբ դիմում է Աստծուն, սակայն մարդ-Աստված հարաբերությունները ներկայանում են բազմաչափ. մարդը խնդրում է ներել իր մեղքերը, իսկ Տերը և՛ «ներում» է, և՛ ազնվացնում մարդուն՝ նրան հավատ ներշնչելով սեփական ուժերի հանդեպ: «Մատյան ողբերգության» պոեմում մարդը ինքնադրսևորման, ինքնահաստատման կարողությամբ պարտական է Աստծուն, և վերջինս իր ողորմածությամբ է ներկա մարդու կյանքում:

Ռուս գրականության մեջ դիմակի ընկալումը նույնպես նորություն չէր: Հայ և ռուս գրական մեծերը իրենց քաղաքական, ազգային կյանքի ապագային առնչվող մտատանջություններով էին ապրում, և այս առումով էլ ուշագրավ են Ավ. Բսահայկյան-Ալ. Բլոկ առնչությունները: Հայ գրողի ժառանգության մեջ՝ այդ թվում նաև անտիպ գրառումներում, Բլոկ – Բսահայկյան ուղղակի աղերսները դժվար է մատնանշել. Բսահայկյանը իր ծոցատետրերից մեկում գրի է առել Բլոկի «Ռուսաստան» բանաստեղծությունից մեջբերում («Ռուսաստան, աղքատ Ռուսաստան»), որից հասկանալի է դառնում նրանց հուզող հիմնահարցը՝ իրենց երկրների քաղաքական ճակատագրի շուրջ մտահո-

<sup>6</sup> Գ. Ն ժ դ ե հ. Հատընտիր, Երևան, 2000, էջ 114:

գությունները, տազնապը վաղվա օրվա նկատմամբ: Կոտորածն ու նախճիրը հայերի գոյաբանության խնդիրն էր, սակայն ռուս-ճապոնական պատերազմում պարտված երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական անկայուն վիճակը, սովը, համաճարակը, ապստամբությունները, դեպի պրոլետարական կուլտուրայի անորոշություն կերպափոխվող մշակույթը ռուսական կայսրությանը անբարեհույս վիճակում էին պահում: 1905 թ. երկրի քաղաքական կացությամբ թելադրված՝ իր սերնդի կենսագրության մասին Բլոկը գրում է.

Մենք զարհուրի տարիների զավակներն ենք  
Եվ ի գորու չենք ոչինչ մոռանալու  
Մոխրացած տարիները ...<sup>7</sup>

«Հատուցում» պոեմում Բլոկը չտեսնված-չլսված փոփոխություններ է կանխատեսում իր երկրի համար, իսկ դրանից առաջ գրված Վ. Բրյուսովի «Գալիք հոներին» ստեղծագործությունը ապագա ավերող հոների մասին գրողի մտորումներն է ծրարում: Բլոկի «Տասներկուսը» պոեմում յուրօրինակ սնոտիապաշտական, տարերային աղետի զգացումներ կան, իսկ դրան հաջորդող «Սկյութները» շաղախված է հեղափոխություն կատարած ժողովրդի հզոր կարողության դաժան նախազգացումով: Ս. Եսենինի «Սև մարդը» մարդ արարածի մասին տազնապալի խոհերի արդյունք է, և «...ավելի ողբերգական ստեղծագործություն նրա գրական ժառանգության մեջ գոյություն չունի...»<sup>8</sup>, - վկայում է ռուս գրականագիտությունը:

1905 թ. Ավ. Բլոկը «Ռուսական սիմվոլիզմի ներկա վիճակը» դասախոսության մեջ հավաստում է. «Եվ ահա կատարվեց. իմ սեփական կախարդական աշխարհը դարձավ իմ անձնական գործունեության ասպարեզը, իմ «կազմախոսական թատրոնը» կամ բալագանը, որտեղ ինքս, իմ թովիչ տիկնիկների կողքին դեր եմ խաղում: Այլ կերպ ասած՝ սեփական կյանքս վերածեցի արվեստի (ecce homo)» (V, 429):

Ավ. Բասահյանի ստեղծագործություններին անդրադառնալիս նրա առաջին գրաքննադատներից մեկը նշում է սիմվոլիզմի գեղագիտության որոշակի առկայությունը նրա գրական վաստակում. «...ընդհանուր կոլորիտով երբեմն ռոմանտիզմի... սիմվոլիզմի դրոշմն է կրում»<sup>9</sup>: XX դ. առաջին տասնամյակներում սիմվոլիզմը ընդհանրապես որոշակի մթնոլորտ էր ստեղծում ազգային գրականության մեջ, մասնավորապես պոեզիայում՝ պայմանավորված ազգային երազի նոր փլուզումով: Լ. Շանթի, Մ. Մեծարենցի, Վ. Տերյանի ստեղծագործություններում այս հոսանքն արդեն դառնում է գրական-պատմական ընթացքի արտահայտություն: Ազգային-քաղաքական կյանքով թելադրված՝ հայ գրողներն իրենց հոգևոր մղձավանջն արտահայտելու համար կողմնորոշվեցին դեպի սիմվոլիզմի գեղագիտությունը:

<sup>7</sup> А. Б л о к. Собр. соч. в 8 томах. Т. 2. М.–Л., 1961, с. 213. Այսուհետև հատորը և էջը կնշվեն տեքստում՝ մեջբերմանը կից: Բնագրից թարգմանությունները մերն են:

<sup>8</sup> С. Е с е н и н. Стихотворения. Поэмы. М., 1985, с. 23.

<sup>9</sup> «Մուրճ», 1904, № 3, էջ 55:

Իր կարդացած վերոհիշյալ դասախոսությունից մեկ տարի անց՝ 1906 թ., Ալ. Բլոկը գրում է «Ձյունե դիմակ» բանաստեղծությունների շարքը, որի «Դիմակ» բաժնում վրձնում է դիմակահանդեսային-պարահանդեսային մթնոլորտ. այստեղ դիմակավոր «տիկնիկների» պահվածք - կեցվածքը շինծու է և բռնազբոսիկ, իսկ նրանց խոսակցությունը՝ դատարկ ու անիմաստ: Այդ տրամադրությանը համահունչ էլ գրողը ընտրել է վերնագիրը՝ «Անգույն գրույցներ» («Շնչոջում է դիմակը դիմակին Չար դիմակը համեստ դիմակին, Երրորդը-շփոթված է...», II, 223): Այլ դեպքում էլ շարքի բանաստեղծություններից մեկի մեջ («Բազմոցի անկյունում») Բլոկը այդ դիմակակիր հերոսների ստապատիր, կեղծ ու նանիր խոսակցությունն է արձանագրում.

Ես հեքիաթներ կպատմեմ, ինչպիսին կամենաք,  
Ես դիմակներ կբերեմ, ինչպիսին ցանկանաք... (II, 225):

«Ծաղրող կինը» բանաստեղծության մեջ հերոսին լքող գեղուհին վերադառնում է իր ասպետի մոտ և համոզում նրան, որ իր դավաճանությունը նրա քնի և երազի արդյունքն է. ասել կուզի՝ որն է բան էլ չի պատահել, այդ ամենը նրան թվացել է: Մեկ այլ դեպքում էլ սիրահար ասպետը ձյունե խարույկի մեջ է այրվում («Ձյունե խարույկ»): Այսինքն՝ խառնվել են աստառն ու երեսը, և այդտեղ բանականությունն ու տրամաբանությունը տեղ ու դեր չունեն: «Մեղկատականոց» բանաստեղծության մեջ այս ամենից տազնապահար հերոսներից մեկը, որը, անշուշտ, հեղինակն է, դերասաններին խնդրում է «սրբագրել իրենց արվեստը», որպեսզի ընթացիկ ճշմարտություններից մարդիկ իրենց զգան «հիվանդ և լուսավոր»: Այլ դեպքում էլ («Շփոթմունք») Բլոկի հերոսը դիմակից խնդրում է վերադարձնել իր «լուսավոր թախիծը», և «լուսավոր» հասկացությունը բոլոր դեպքերում բնական կենսավիճակ է ենթադրում: Նման տրամադրությամբ էլ այն հոգեհարազատանում է XX դ. հայ մեկ այլ բանաստեղծի՝ Պ. Սևակի՝ «Հանեցեք ձեր դիմակները, որ գեթ մի քիչ դյուրին շնչե՛լ կարողանաք» եզրահանգմանը<sup>10</sup>:

Անդրադառնալով Ալ. Բլոկի «Ձյունե դիմակ» շարքին՝ բանաստեղծի ստեղծագործությունների նրբին գիտակ գրականագետը՝ Զ. Մինցը, գրում է. «Այստեղ «ես»-ը և «դու»-ն թշնամիներ են («Այդ թշնամական հանդիպումից առաջ Ես երբեք չեմ թողնի վահանը») [II, 269]: .... Բլոկի հերոսուհին այստեղ նոր հասկություններ է ձեռք բերում. նա խաբեբա է, խորամանկ, նենգ... Հերոսների վերաբերմունքը նմանվում է «ես»-«կյանք» հարաբերություններին...» հանդիպումը... կրում է «դեմոնիզմի» հետքը... «Ձյունե դիմակը» նախապատրաստում է Սև արյան թեման «Մարսափելի աշխարհում»<sup>11</sup>:

<sup>10</sup> Պ. Ս և ա կ. Երկեր երեք հատորով, հ. 1, Երևան, 1982, էջ 126:

<sup>11</sup> 3. Г. М и н ц. Поэтика Александра Блока. СПб., 1999, с. 166. Այս մասին գրականագիտությունը ուշագրավ զուգահեռներ է ներկայացնում Ալ. Բլոկի «Տասներկուսը» պոեմի, Ս. Բելու «Պեստերբուրգի», Բ. Պիլնյակի «Մերկ տարի», Մ. Բուլգակովի «Դեմոնիզմը»՝ հետազայում «Վարպետը և Մարգարիտը» վերանվանված ստեղծագործությունների միջև, որոնց առանցքը հեղափոխության թեման է XX դ. ռուս գրականության մեջ: Բլոկի «Տասներկուսում» Նեոն է՝ Քրիստոսի դիմակով. այս մասին տե՛ս Ա. Блок и русский постсимволизм. – “Тезисы докладов

Ժամանակի ռուս գրողների և Ավ. Բասահայանի ստեղծագործությունների բազմակողմանի, իրատես ուսումնասիրությունը, ժամանակի և տարածության մեջ առկա նույն և բազմօրինակ ընկալում - մեկնությունները հիմք են տալիս խոր ընդհանրության եզրեր գտնելու ազգային «ես» ունեցող ժողովուրդների մեծ ներկայացուցիչների միջև: Բասահայանը, իր երկատված երկրի քաղաքական ճակատագրով պայմանավորված, նույնպես հասկանում էր, որ չդիմակայված կողմնորոշումը քննություն չի բռնում և դիմում է այլաբանության՝ համոզված, որ հայ մարդը XX դ. մարտահրավերներին, համաշխարհային քաղաքական զարգացումներին չի կարող պատասխանել զուտ ազգային հենքի վրա զարգացող միաչափ վերաբերմունքով: Մտաբերենք, որ «Հայ պոեզիայի անթոլոգիայի» համար նախատեսված Բասահայանի ստեղծագործությունների թարգմանությամբ զբաղվում էր Ալ. Բլոկը: 1915 թ. նոյեմբերին Բ. Մ. Բրյուսովային ուղղված նամակներից մեկում նա Բասահայանի մասին գրում է. «...Նա հոյակապ բանաստեղծ է..., աներևակայելի դժվար թարգմանության համար... Ես նրբորեն սիրեցի այդ բանաստեղծին»<sup>12</sup>, իսկ մի տարի անց հայ գրողի ստեղծագործական նկարագրին անդրադառնում է մեկ այլ նամակում. «Բասահայանը առաջնակարգ բանաստեղծ է, թերևս այդպիսի թարմ և անմիջական տաղանդ այժմ չկա ողջ Եվրոպայում»<sup>13</sup>: Բլոկը Բասահայանից թարգմանել է 20 բանաստեղծություն, և այդ օրերին ապրած ստեղծագործական տառապանքի մասին ուշագրավ հուշեր է թողել նրա մտաբանությամբ. «Տողացի թարգմանությամբ չէր բավարարվում և խնդրում էր, որ կարդան բարձրաձայն, որպեսզի ռիթմը պահպանի: Նրան շատ էր դուր գալիս, երբ իր մայրը և ես արտասանում էինք»<sup>14</sup>:

Այդ նույն տարիներին՝ 1900-ական թվականների առաջին կեսին, հայ կյանքում դիմակին է դիմում նաև Ավ. Բասահայանը՝ պայմանավորված մասնավորապես Հայաստան երկրի քաղաքական փոթորկահույզ իրադարձություններով: XIX դարավերջը և XX դարի առաջին կեսը հայ ժողովրդի պատմության ամենադաժան ու արյունոտ ժամանակաշրջանն էր. «...Դարասկզբի հայ իրականության մեջ երևի թե չլինի մեկը, որ Ավ. Բասահայանի չափ, Բասահայանի մոլեգնությամբ ծառացած լինի ազգային հույսերի և արյան վրա վաճառականություն անող եվրոպական դիվանագետների, կեղծ բարեպաշտների, «հայրենասիրական» արցունքներով հարցր փակուղիների առաջ դրած մարդկանց դեմ»<sup>15</sup>, - գրում է գրականագետ Ս. Աղաբաբյանը: Նման պարագայում Բասահայանի խոսքը հոգեբանական խոր հազեցվածություն ունի, խոսքի հետևում ներկա են կերպարներ, որոնք իրենց «ես»-ով, դիմակներով և դիմակափոխության հնարավորություններով ընթերցողին հուշում են, թե ինչպիսին պետք է լինի XX դարի մարդը:

научной конференции”, Тарту, 1991, с. 27; К. М о ч у л ь с к и й. А. Блок, А. Белый, В. Брюсов. М., 1997, с. 147.

<sup>12</sup> Л. М к р т ч я н. Родное и близкое. М., 1978, с. 74.

<sup>13</sup> *Նույն տեղում*, էջ 75:

<sup>14</sup> М. А. Б е к е т о в а. Александр Блок (биографический очерк). Л., 1930, с. 204-205.

<sup>15</sup> Ս. Աղաբաբյան. XX դարի գրականության գուրահեռներում, գիրք 1, Երևան, 1983, էջ 64:

Հայրենիքի մասին բանաստեղծի խոհերը նրա օրագրում՝ «Հիշատակարանում», վերաբերում են 1915–1924 թթ., իսկ մինչ այդ գրողի խորհրդածությունները դիմակի մասին առնչվում են անձնական ոլորտներին: Եվ իհարկե, ուշագրավ են նաև նրա՝ անձնական կյանքում դիմակին դիմելու անհրաժեշտության շուրջ խորհրդածությունները ևս, որոնք վերաբերում են մարդ, տղամարդ, ստեղծագործող, կենցաղավար Բսահակյանին:

Վաղ տարիների գրառումներից մեկում նոր կյանք մտած բանաստեղծը արձանագրում է. «Ես գուր եմ հուսահատվում: Արհամարհեմ հասարակաց կարծիքը, ընդունեմ ինքնապաշտպան դիմակներ ու դրություններ և ոգևորվեմ իմ նպատակներով՝ ստեղծեմ նշանավոր, հանճարեղ երկեր, երկնեմ երգեր...»<sup>16</sup>: Այսինքն՝ իր մեծ նպատակների իրագործման համար հարկ է համապատասխան կերպով նաև կերպափոխվել, և դա բանաստեղծը գիտակցում էր դեռ վաղ տարիներից: Մեկ այլ գրառման մեջ էլ Բսահակյանը երկատված տեսքով է ներկայանում. որպես մտածող՝ կողքից դիտում, քննում է ոչ միայն իր արարքներն ու դրանց շարժառիթները, այլև շրջապատի, այն էլ՝ իրենից անկախ: Գրողի երկակի էությունը գրառումներում արդեն ներքին, ենթատեքստային լիցքով կամ դիմակով են ներկայանում. դա հատկապես Խորհրդային Հայաստանում բնակվելու տարիներին՝ 1936 թ. սկսած: Բանաստեղծի անհատականությունը, ինչ խոսք, միասնական է, սակայն անհատը հասարակական տարբեր շրջանների հետ հաղորդակցվելիս խոսում է նրանց հետ բազմաթիվ «լեզուներով», պատասխանում նրանց տարբեր «լեզուներով» ու «ձայներով»: Արդյունքում նույն մեկ մարդն է, որը, շփման մեջ մտնելով այլևայլ մարդկանց հետ, փոփոխվում է, երբեմն նույնիսկ նշանակալից չափով: «Պուշկինի վարքը,– գրում է ռուս անվանի գրականագետ Յու. Լոտմանը,– տարբերվում է իր յուրօրինակությամբ. այն ենթադրում է ... հնարավոր հավաքածու մի ամբողջ դիմանկարի, որը տարբերվում է՝ փոխելով պահվածքի ձևերը»<sup>17</sup>: Մեծ գրականագետի ասածը հավասարապես կարելի է վերագրել նաև Ավ. Բսահակյանին:

Դիմակ – սիրած էակ հարաբերությունների շուրջ խոսակցությունից առաջ, թվում է, տեղին է նախ ներկայացնել բանաստեղծի ստեղծագործական առաջին շրջանի խոհերը մարդ արարածի մասին՝ իր համար ծանր, ճգնաժամային շրջանում կատարած: Խոսքը վերաբերում է «Աբու-լալա Մահարի» պոեմի մտորումներին, պոեմ, որի ռուսերեն և գերմաներեն թարգմանությունների մասին գրախոսողները արձանագրել են. «...միայն հայ մարդը կարող է այսքան սև հոռետես լինել»<sup>18</sup>: Կյանքի, աշխարհի, մարդ-արարածի հանդեպ համընդհանուր սեր տածող հեղինակը պահի ազդեցությամբ գրում է.

<sup>16</sup> Ավ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան, Երևան, 1977, էջ 244-245: Այսուհետև էջերը կնշվեն տեքստում՝ մեջբերումներին կից:

<sup>17</sup> Ю. М. Л о т м а н. Александр Сергеевич Пушкин. Л., 1982, с. 64.

<sup>18</sup> Ավ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու վեց հատորով (1973-1979), հ. 6, Երևան, 1979, էջ 217: Այսուհետև հատորը և էջը կնշվեն տեքստում՝ մեջբերմանը կից:



Մարդիկ ի՞նչ են որ...դիմակված դներ, ժանիքներ ունեն, անտես ճիրաններ,

Մտքակներ ունեն և որոճող են և նրանց լեզուն՝ թունավոր սուսեր:

Եվ ո՞վ են մարդիկ...աղվեսների հոտ, էսամոլ անհուն, ուրացող, մատնիչ,

Անկումիդ ուրախ, արյուններ լակող, գազան մանկասպան, և դահիճ, դահիճ (II, 70):

Այս մոտեցման հենքով էլ լուսաբանենք Բսահակյան տղամարդ-կին փոխհարաբերությունները:

Հայտնի է, որ Բսահակյանը վեհ և վերերկրային զգացմունքներ է տածել Շուշանիկ Մատակյանի՝ բանաստեղծական խառնվածքի տեր մի էակի նկատմամբ: Այլևայլ առիթներով գրողը իր ներաշխարհը համեմատում է Դանթեի՝ Բեատրիչեի, Պետրարկայի՝ Լաուրայի, Բայրոնի՝ Մ. Չոտորի հանդեպ տածած զգացմունքներին: Բսահակյանի սերը, սակայն, ժամանակի հետ դառնում է սիրած էակի հարազատների նյութապաշտ հակումների գոհը: Տասնամյակներ անց անգամ, օրագրային էջերի, բանաստեղծությունների, անտիպ գրառումների վկայությամբ, իր մեծ սերը բանաստեղծը վերապրում է իբրև գալարվող, հոշոտող ցավ ու ողբերգություն. «...տիեզերքի խորությունն ուներ իմ սերը...սիրում էի արյունիս ամեն մի կաթիլով և մաքուր, մաքուր... Ես լացեցի՝ արյուն ու թարախ» (Հ, 284):

«Հիշատակարանում» և գրառումներում կան նաև կանացի այլ կերպարներ, որոնց էությունը բացահայտվում է միայն հեղինակի մենախոսությունների միջոցով: Բսահակյանի միտքը նրանցով զբաղվում է սուկ որպես տղամարդ՝ Չարուհի, Հրիսիմե: Բսահակյան-Չարուհի առնչություններում, օրինակ, նկատելի են կին-տղամարդ փոխհարաբերությունների նոր կտրվածքներ: Նրանց մտերմությունը սուկ ֆիզիկական եզրերով է պայմանավորված, և այդ պատճառով էլ նրանց միջև ցանկացած բախումն ու ընդհարումը պարզապես նոր դիմակի է հանգեցնում: 1897 թ. ծավալուն մի գրառում, օրինակ, ուղեկցվում է Շուշիկի մասին տեղեկություններով, և այս հանգամանքն էլ հասկանալի է դարձնում գրողի այսօրինակ կեցվածքը. նա Շուշիկին գիտակցաբար ընդունում և միշտ ներկայացնում է առանց դիմակի, և այդ է պատճառը, որ կյանքում, «Հիշատակարանի» վկայությամբ, մորմոքուն ցավ է ապրում նրա համար, մինչդեռ Չարուհու հետ ունեցած փոխհարաբերությունները՝ դիմակով թելադրված, որն է ցավ, մորմոք, առավել ևս՝ տվյալտանքի զգայական լիցքեր չեն պարունակում. «...Շուշիկը ինքը իր կամքով բացատրեց տարիներ առաջ իր վարմունքը իմ սիրո նկատմամբ... Նույն երեկոյան կովեցա Չարուհու հետ. օրիորդը ինձ վրա նայում էր կես արհամարհանքով... Ես իրեն ասացի, որ դիմակավոր եք, որ լավ մարդու հերն անիծած, վատը արդեն վատ է:

Էլ չենք խոսում իրար հետ. ես հեչ չպիտի զիջեմ, թող նա զիջե... Ինձ խորը վիրավորել էր. ես էլ հարգում էի, շատ հարգում էի օր. Չարուհուն-այդ վար-

մունքը ինձ այնքան զայրացրեց, որ ես ստիպված եղա նրան ասելու, որ կանայք դիմականեր ունեն, ակնարկելով օրիորդին...» (Հ, 240):

Տղամարդ Բսահակյան-դիմակ առումով ուշագրավ է մի մանրամասն նա. հայտնի են 1910–1912 թթ. Վիկտորիա Աբովյանի հանդեպ տաժած գրողի զգացմունքները, երկու տասնյակից ավելի նամակները. «Ձեզ եմ սիրում անկեղծ և տաք. եթե Դուք ինձ չթողնեք... հավատացած եմ, որ ես Ձեզ չեմ թողնի (իբրև փորձված մարդ գրում եմ)...» (VI, 95): Վ. Աբովյանի մասին, սակայն, օրագրում և անտիպ գրառումներում որևէ հիշատակություն չկա:

Սիրող տղամարդ և դիմակավոր կին զուգահեռով է ծավալվում Բսահակյանի 1923 թ. Վենետիկում գրված բանաստեղծությունը.

Ասում են, թե՛ դու այնպես Ու գրկիս մեջ այսօր դեռ  
Մոռացել ես ինձ այնպես Կիզող կրակ է վառել,  
Որ երբ անունս են տալիս, Բսկ երբ անունդ են տալիս,  
Հազիվ միտքդ եմ գալիս: Միրտս արյուն է լալիս:

Բայց, նազելի՛ս, ձեր բակում Ա՛խ, իրավ է՛ դու այնպես  
Այն լորին է դեռ ծաղկում, Մոռացել ես ինձ այնպես,  
Որի քնքուշ բույրի մեջ Որ երբ անունս են տալիս,  
Քեզ գրկեցի սիրատենչ: Հազիվ միտքդ եմ գալիս... (I, 317):

1919 թ. գրած «Այցի եմ գալիս քեզ մոտ ես հաճախ» բանաստեղծության մեջ արդեն դիմակով «ես»-ն է՛ սիրո հրդեհված հոգով և սառն, անտարբեր վերաբերմունք արտահայտող դիմակով.

...Եվ սիրո մասին խոսում ենք նույնպես,  
Բայց խիստ անտարբեր ձևանում եմ ես,  
Վրադ չեմ նայում, չեմ լսում ստեպ,  
Որպես թե անհույզ, սառն եմ քո հանդեպ:

Բայց հավում եմ ես սիրուց բոցակեզ,  
Ուզում եմ գրկել ու համբուրել քեզ.  
Հազիվ գսպում եմ մըրրիկը սրտիս,  
Ա՛խ, սակայն հոգիս բերանս է գալիս... (I, 305):

Մեկ այլ դեպքում էլ բանաստեղծը նկարագրում է դիմակավորված բնությունը. նա ճանաչողական գործընթացի խորաթափանց քննություն է կատարում և եզրակացնում, որ միայն արտաքին տեսքի ճանաչումը դեռևս չի նշանակում իրի, երևույթի ներքին էության ճանաչողություն՝ «ինքնին իր»-ի ճանաչումը, որովհետև դրա այս վիճակն արդեն նրա երկրորդ դիմակն է, որին հաջորդում է երրորդը, չորրորդը և այսպես շարունակ. «Մարդու աչքին՝ տիեզերքի վրա մի մեծ դիմակ կա. տիեզերքը դիմակավորված, վարագուրված է, և տիեզերական բոլոր իրերը դիմակ ունեն. մարդը միայն արտաքինը կարող է տեսնել. ներքինը, էականը Dinğ an sich («իրն ինքնին») չի կարող երբեք. և դի-

մակը այնքան բարդ է, մի դիմակի տակ մյուսը և անվերջ, անհամար, որ մարդը մի դիմակը պատռելով, դեմ է առնում մյուս դիմակներին...» (Հ, 309): Գրառման վկայությամբ Բասահայանը ճանաչման գործընթացը հանգեցնում է ազնուստիցիզմի՝ երևույթների անճանաչելիության մտայնությանը՝ Կանտի հետևությամբ: Աշխարհն այնպիսին չէ, որպիսին նա ներկայանում է. այն մարդկային զգայարաններին մատչելի չէ, և ստուգել իրերի ամենախոր արմատները, հանդիպել երես առ երես ճշմարտությանը անհասանելի է մարդ էակին: Մարդն ի գորու է իմանալու միայն երևույթները և մնայուն հարաբերությունները. չկա մարդու համար բացարձակ ճշմարտություն. նրա մտքի սահմաններից դուրս ոչինչ գոյություն չունի: Ասել կուզի՝ գրողը հարաբերական ճշմարտություն է ընդունում մարդ արարածի համար, որը չի համապատասխանում իրերի բնությանը և պարտադիր չէ մարդկանց: Կանտի համոզմամբ մարդ-մարդ և մարդ-հասարակություն հարաբերություններում համակեցության կանոնները պետք է վեր դասել շահադիտական, օգտակարության կամ համակրանքի նկատառումներից, այսինքն՝ նրա հիմքում արդարության գաղափարն է: Եվրոպա ուսանելու մեկնած երիտասարդ Բասահայանին կանտյան բարոյական մաքուր սկզբունքները հուզում և զբաղեցնում էին ավելի լայն հայեցակետով. բարոյական ո՞ր օրենքի համաձայն աշխարհի հզոր տերությունների ղեկավարները ոչ միայն չեն պաշտպանում իր ժողովրդի արդարության և ազատության ձգտման իրավունքը, այլև խաբում են նրան և հանուն շահի՝ թուրքի ձեռքով կոտորել տալիս նրան:

1936 թ. դեկտեմբերի 5-ին Ավ. Բասահայանը վերջնականապես հաստատվում է հայրենիքում: Գրողի այս վերջին՝ երրորդ շրջանը, բեղմնավոր չէր: Ոչ միայն սոցիալ-քաղաքական, այլև մարդկային-բարոյական առումով այդ տարիները ծանր էին նրա համար: 30-ական թվականների իր հոգեվիճակը օրագրում, անտիպ գրառումներում գրողն ուղղակի վերլուծությունների չի ենթարկում, այլ խորհրդանիշերով է ներկայացնում, բնութագրում, և նման գրառումները ստալինյան բռնատիրական տարիները առավել կատարյալ տեսքով են ներկայացնում: Դրանց օգնությամբ Բասահայանի դիմակը առավել կատարյալ է դառնում: Ժողովուրդների մեծ առաջնորդի՝ Բ. Մտալինի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ Ավ. Բասահայանը նվիրում է բանաստեղծություն՝ «Հայ ժողովրդի նամակը չափածոյի վերածեց Ստալինյան մրցանակի լաուրեատ, բանաստեղծ Ավետիք Բասահայանը»: Ըստ էության, արյունոտ թունակալին նվիրված այս ստեղծագործությունը հայրենիքում ապրելու պարտամուրհակի մարումն էր: Խորհրդային երկրի սոցիալ-հասարակական, հոգևոր-բարոյական ընթացքը միտումնավոր ուղղված էր դեպի դասակարգային պայքար, և արյունոտ բռնակալը ոչնչացնում էր ժողովրդի միտքն ու ոգին: Մի կարճ ժամանակ անց Բասահայանը ականատեսը դարձավ կրտսեր գործընկերների ողբերգական ճակատագրին՝ Ե. Չարենց, Ակ. Բակունց, Վ. Թոթովենց, Զ. Եսայան, Գ. Մահարի... Գրականագետ Լ. Հախվերդյանի հավաստմամբ՝ «...վկայել կարող եմ, թե Վարպետը ինչքան ծանր էր ապրում իր անազատ վիճակը... Երբեմն ասում էր նույնիսկ, թե իզուր եկավ հայրենիք,

շատ թանկ գին վճարեց դրա համար՝ հոգու անկախությունը, բանաստեղծի ներքին ազատությունը, անհատականության կորուստը»<sup>19</sup>:

Դիմակավորված է ոչ միայն «ես» խորհրդային քաղաքացին, այլև պետական, քաղաքական գործիչների, կուսակցությունների, պետությունների «ես»-երը: Այս առումով ուշագրավ են Հայաստան երկրի քաղաքական իրադրությունների շուրջ խորհրդածությունները: Ըստ էության, թվում է, ն՝ գրառումներում, ն՝ հրապարակված օրագրում՝ «Հիշատակարանում», գրողը պատմական-փիլիսոփայական հենքի վրա ստեղծել է հայ ժողովրդի քաղաքական կյանքի ժամանակագրությունը: Այստեղ հեղինակը քննում է ազգային պատմական ճակատագիրը՝ անցյալ-ներկա-գալիք պատմական կտրվածքով: Օրագիրը ծրարում է 1915 թ. արյունոտ իրադարձություններից ծայր առնող ողբերգությունը, գրողի ողբը՝ ժողովրդի անօրինակ ճակատագրի հոշոտող ցավով, ներկայանում է նրա հեղինակների՝ աշխարհի հզորների դեմ ուղղված թունոտ շանթերով, նզովք-անեծքներով: 1916 թ. գրառումներից մեկում Իսահակյանն արձանագրում է. «Հայոց բոլոր արյունի մեղքը եվրոպացիների խղճի վրա է ծանրացած...: Նրանք Թուրքիայում կապիտալ ներդրումներ են կատարում՝ ապահովելով իրենց նյութական շահը: Թո՛ղ կոտորե թուրքը, եթե այն նրան պետք է, մանավանդ, եթե դրա համար մեզ կոնցեսիա է տալիս, ուրեմն թո՛ղ ջնջե, մե՛զ ինչ. մենք մեր շահը, փողն ենք ուզում: Այս պատերազմը... ցույց տվեց, որ բոլորն էլ բորենիներ են, խաբողներ, փոքր ազգերի դահիճներ, և ամենքի դրոշակը հյուսված է կեղծիքներից, խոստումներից, խորամանկություններից և մեծ գաղափարների (եղբայրություն, քաղաքակրթություն, ազգերի ազատություն, իրավունք, արդարություն) անուններից» (Հ, 318–319):

Իսահակյանը, ի մի բերելով հայ կյանքի քաղաքական սխալները, գտնում է, որ հայերն իրենց արդարացի պայքարում միամտաբար հավատացին Եվրոպայի «մարդասիրությանը»՝ համոզված, որ վերջինս աջակցելու է իրենց: Քաղաքական այդ կարճատեսությունն էլ պատճառ դարձավ, որ 1915 թ. ապրիլի 24-ից ծայր առած արյունոտ անցքերը Արևմտյան Հայաստանից տեղափոխվեն Արևելյան Հայաստան: Այսօրինակ տրամաբանությամբ էլ օրագրի հեղինակը շարունակում է. «Մեզանից հիմա օգուտ չունեն. ունեին, երբ նեղն էին, պատերազմ կար, խոստումների շրջան էր, որ կովեին հայերը, որ ջարդվեին... իսկ հենց որ պատերազմը վերջացավ, հիմա՝ շահը. մեզնից ի՞նչ շահ. քանդված երկիր, ավեր, սով, ջարդված, մերկ ժողովուրդ... իսկ որ քուրդը, թաթարը հայերին կողոպտել են... ուրեմն նրանց հետ բարեկամանալ՝ օգտվելու համար, հապա հայե՞րք... Պետք է նրանց օգնեն, հաց տան, փող տան, հագուստ տան... Քյուրդը սպանում է իր երախտավորին՝ ազատվելու համար, իսկ եվրոպացին ինչո՞վ է բարձր քյուրդի մորալից... Լիրբ Ֆրանսիա. գնաց զինաթափ արեց հայերին, կամավորներին և զինեց քյուրդերին, թյուրքին ...» (Հ, 341, 327):

Իսահակյանի առաջ կանգնած էր մարդասպան Եվրոպան, և հատկանշական է, որ նույն ձևով է Եվրոպային անվանել Անրի Բարբյուսը. «...Քաղա-

<sup>19</sup> Լ. Հ ա ի վ եր դ յ ա ն. Վարպետը, Երևան, 1990, էջ 175:

քակրությունը, քրիստոնեությունը չուզեց մեզ ազատել... նզո՛վք մարդկությանը, ազգերին և ամենից շատ՝ եվրոպացիներին...» (Հ, 345): Եթե Միամանթոն 1915 թ. նախորդող հայոց պատմության արյունոտ տարիներին, մարդկության դավանած ոճրագործ օրենքների՝ դեմ ըմբոստացած, գրում էր՝ «Ո՛վ մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ...»<sup>20</sup>, ապա Բսահակյանը՝ իբրև ժամանակակից ոչ միայն իր ժողովրդի նախնիների, այլև փոքր ազգերի (հույներ, ասորիներ) հանդեպ աշխարհի հզորների նյութած դավերին. 1918 թ. վավերացնում է. «Թու՛ք ու մու՛ր մարդկության խղճին...» (Հ, 334): Հեղինակի այս խորհրդածությունների հիմքում տարբեր ժողովուրդների՝ դեպի լուսավորություն, առաջադիմություն ու կատարելություն ուղղված հայացքն է, համաձայն որի՝ մարդկության նպատակը մարդասիրական գաղափարների իրագործումն է, դիրքորոշում, որով նա ազգակցվում է ոռուս և եվրոպական մեծ մտածողներին:

1919 թ. ապրիլի 9-ին Ալ. Բլոկը կարդում է «Հումանիզմի անկումը» վերնագրով դասախոսություն, որի վերնագիրն արդեն մարդկության ապագայի համար նրա տազնապի վկայությունն է: Բլոկը մասնավորապես ասում էր. «Ողջ աշխարհում հնչում է հակամարդասիրության գանգը... մարդը առավել մոտ է կանգնած տարերքին» (V, 103): Բլոկը, ըստ էության, Հերդերի տեսակետն է հանրագումարել, համաձայն որի՝ «Մարդու մոտ չկա ոչինչ առավել վեհ, քան մարդասիրական ոգին»<sup>21</sup>: Դատապարտելով եվրոպացիների բարոյական վարքագիծը՝ Ավ. Բսահակյանը 1921 թ. «Մայիսի 27, Վենետիկ» գրառման մեջ արձանագրում է, որ Եվրոպան իր սեփական սոցիալ-քաղաքական շահերի համար «բորենի Թուրքիային հռչակել տվեց մի ժողովուրդ, որը ցեղակից է եվրոպացուն և հավատակից է եվրոպացուն... և հիմա այդ Եվրոպան թուրքին գրկում է, համբուրում, ճաշեր տալիս, մամուլը գովում է, փառաբանում...» (Հ, 346):

Ժամանակի հայ քաղաքական ողբերգության պատճառներին անդրադառնալիս գրողը ոչ միայն մեղադրում է եվրոպական քրիստոնյա երկրներին, այլև, համարյա բոլոր դեպքերում, նշում հայերի մեղքը ու մեղադրում այդ երկրների հանդեպ տաժած անվերապահ, անքննելի, միամիտ հավատի համար, որը և դարձավ նրա ամենամեծ դժբախտությունը: Պատերազմի ժամանակ հայերին մեծ խոստումներ շոայլեցին, նրանք հավատացին: «...Կարծում էին, թե աշխարհը իրենց պես է - գաղափարական, հավատարիմ, զոհաբերող...» (Հ, 355), - խոստովանում է բանաստեղծը: Հայոց պատմության դառը դասերից իմաստնացած Բսահակյանը միաժամանակ քաղաքական հեռատեսություն է քարոզում իր ազգի զավակներին, որպեսզի նրանք այլևս կեղծ բարեկամներ չփնտրեն. «Ո՛վ է քո բարեկամդ, ո՛վ է քո թշնամիդ՝ երկունս էլ միննույնն են՝ տարբեր դիմակներով» (Հ, 320): Համոզված, որ իր ժողովրդին անշահախնդիր օգնությունը որևէ տերության կողմից բացակայում է, գրողը նրան պայքարի է կոչում: Իր մարդկային իրավունքների համար կռվի դուրս եկած հայ ժողովուրդն այս «մարդկության գազան-գազան» աշխարհում իրա-

<sup>20</sup> Մի ա մ ա ն թ ու Ընտիր երկեր, Երևան, 1979, էջ 135:

<sup>21</sup> Г.-И. Г о т ф р и д. Идеи и философии истории человечества. М., 1977, с.428.

վունք ունի հավատալու և ապավինելու միայն Աստծուն, և գրողը վկայակոչում է Մինաս կաթողիկոսի հայրենասիրական քերթվածը (Հ, 332):

Նույն այդ դժնի օրերին կատարված մի այլ գրառման մեջ բանաստեղծը հայ ժողովրդի ազատության հիմնահարցը քննարկելիս դիտարկում է հայ-վրաց դաշինքի նպատակահարմարության գործոնը՝ նորովի մեկնաբանելով այն XX դարում՝ նկատի ունենալով XII դ. վերջին և XIII-ի սկզբին հայ-վրաց ժողովուրդների միացյալ ուժերով պայքարը՝ Զաքարյան եղբայրների գլխավորությամբ: Սակայն այժմ իրավիճակն այլ էր, և Հայաստանը կրկին մեն-մենակ էր մնում վայրագ ու զինված թշնամու՝ «դարավոր ոսոխի» արյունոտ շտապանակի դեմ: Այդ տարիների ինքնագրերում Բսահակյանը հստակ ու հիմնավորապես սահմանազատում է Վրաստանի նորաստեղծ կառավարությունն ու մենջնիկյան կուսակցությունը վրաց ժողովրդից: Նման դեպքերում գրողը միշտ կրկնում է՝ վրաց մենջնիկները: «Ասում են այլ, գործում են այլ-վրացիք... Իսկ մենք միամիտ, հովիվ ժողովրդի պես ենք... մեր ներքինը մեր լեզվի վրա է»<sup>22</sup>, - նշում է բանաստեղծը, այնուհետև մեկնաբանում խոսքի-գործի այդ հակասությունը. հային խաբում են վրաց մենջնիկները և գործակցում թշնամու հետ: Այլ գրառումներում Բսահակյանը վրացիների քաղաքական վարքի ընդհանուր գնահատականներից անցնում է կոնկրետ փաստերի. «...այն, ինչ որ ցարերը չէին արել, նրանք արին: Ամեն մի հետք, տող, անուն ջնջում են...»<sup>23</sup>:

1920 թ. գրառումներից մեկում Բսահակյանը Ման-Ռեմոյի բանակցությունները գնահատում է որպես հայ ժողովրդի հանդեպ իրագործված հերթական դավաճանություն: Ման-Ռեմոյի պայմանագիրն ընդունելուց մի քանի օր անց՝ ապրիլի 28-ին, կարմիր բանակը ներխուժում է Անդրկովկաս և տիրանում Բաքվին: Իսկ Քեմալը, համաշխարհային հեղափոխության համար պայքարողի դիմակով, դիմում է հեղափոխական Ռուսաստանի ղեկավարությանը: Համաձայնության դեպքում նա պետք է ներխուժի «իմպերիալիստական» Հայաստան: Այնուհետև կարմիր բանակը հարձակվում է Ջանգեզուրի, Ղարաբաղի վրա, իսկ բոլշևիկների դաշնակից, հեղափոխական Թուրքիան մտնում է Նախիջևան: Կնքվում է Լենին-Քեմալ՝ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև բարեկամության պայմանագիր՝ հանուն համաշխարհային հեղափոխության:

Այս ամենից հետո Բսահակյանի գրառումներում իր դավանած համընդհանուր սիրո գաղափարը՝ որպես մարդկությանը բարոյական կործանումից փրկող միակ գոյապայման, կասկածի տեղիք է տալիս: Այս տարակուսանքի վկայությունն են գրողի անտիպ ձեռագրերը, օրագրի 1915-1922 թթ. բոլոր գրառումները: Հայ կյանքի ողբերգական անցքերից հետո Բսահակյանը քննարկման է ենթարկում մարդասիրական բարձրագույն կարգախոսները, որոնք, ինչպես համոզվում է, միայն դիմակներ են, և նա հիասթափված հոռետեսության գիրկն է ընկնում: Գրողը հասկանում է, որ քաղաքական նպա-

<sup>22</sup> Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Բսահակյանի արխիվ, № 423-424-II:

<sup>23</sup> Նույն տեղում, № 581-II:

տակների իրագործման ճանապարհին բացառված չէ նաև, որ քրիստոնեական սիրո սկզբունքների քողի տակ իրագործվեն ոչ միայն մարդու, այլև երկրի, ազգի, պետության դեմ անբարո արարքներ: Այս առումով հատկանշական է քրիստոնյա Եվրոպայի, հատկապես Գերմանիայի և մահմեդական Թուրքիայի «բարեկամությունը». «Գերմանները իրենց բարեկամությունը թուրքերի հետ համարում են քրիստոնեական սիրո մի փառավոր ապացույց: Քրիստոնյա Եվրոպան խոսքով աստուծ է մահմեդականին, իսկ Գերմանիան, կատարելով Հիսուսի պատվերը, սիրում է թշնամուն, նրան ձեռք տալիս: Ի՞նչ կա ավելի քրիստոնեական: Եվ այս նույն ոգով գրում են նրանց հայտնի աստվածաբանները» (Հ, 326): Գրողի հայացքի խորաթափանցությունը ներկայանում է հատկապես գրառման վերջին տողում. եթե խոսքի և գործի երկատման են գնում իշխողները, դա դատապարտելի է ինքնըստինքյան, բայց և նրանց շահերի պաշտպանության տեսակետից հասկանալի, սակայն երբ քրիստոնեական սկզբունքները առուծախի են հանում հոգևոր դավանանքի տեր մարդիկ՝ աստվածաբանները՝ իբրև գուտ սոցիալական պատվեր կատարողներ, ապա դա արդեն ուղղակի դատապարտելի է և անընդունելի: Բսահակյանի այս մտորումները հիշեցնում են Հայնեի քաղաքական պամֆլետները՝ «Գերմանիա. Չմեռային հեքիաթ», ուր գերմանացի բանաստեղծը ծաղրում է ազատության գաղափարը սոսկ դիմակի հանգեցնող եվրոպական քաղաքական դիրքորոշումը:

Ժամանակը հուշում էր, որ աշխարհի հզորների ընկալած և իրականացրած արժեքային համակարգում «ես»-ը միայն բազմաչափությամբ պետք է ներկայանա՝ որպես այդպիսին միայն դիմակով, որպեսզի դիմակայի նրանց տարաբնույթ խարդավանքներին: Այլ. Բլոկի մտատանջություններն ու մտահոգությունները վերաբերում էին ռուս իրականությանը, իսկ Բսահակյանին՝ հայ կյանքին: Այս առումով էլ նրանց տեքստերը ներքին խոր հոգեհարազատություն ունեն ազգային, մարդկային «ես»-ի տեսակի ուսումնասիրության առումով: Մարդու «ես»-ը նրանցից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում. արդյոք ռուս կամ հայ մարդը տեսնու՞մ, հասկանու՞մ է գեղարվեստականացված խոսքի խաղային բնույթը՝ ցանկացած մշակույթում առկա բանահյուսության՝ առասպել, հեքիաթ, առակ, սիմվոլիզմի կամ գրական որևէ այլ ազդեցությամբ հյուսված: Բանասիրական տեքստը բոլոր դեպքերում նրանց օժտում է ժամանակի և տարածության մեջ սթափ ու ճիշտ կերպարփոխվելու, դիմակավորվելու կարողությամբ:

Անդրադառնալով անցյալ ունեցող գրողների «ես»-ի քննությանը՝ Մ. Յվետանան գրում է. «... պատմություն ունեցողները... չափազանց մեծ են իրենց ծավալով ու թափով, նրանք նեղվում են իրենց «ես»-ի մեջ՝ նույնիսկ ամենամեծի մեջ. նրանք այնպես են ընդլայնում այդ «ես»-ը, որ նրանից ոչինչ չեն թողնում. այն պարզապես ձուլվում է հորիզոնի եզրագծին»<sup>24</sup>: Պատմության դաժան քառուղիներով անցած ժողովրդի գավակը՝ Բսահակյան հայր, ինքնորոշված և դիմակավորված է, բայց այդպիսին չէ Բսահակյան քաղաքացին: Այդպիսին չէ նաև աշխարհաքաղաքացին, որն ուզում է հաստատել և ապա-

<sup>24</sup> М. Ц в е т а е в а. Собр. соч. в 7 томах. Т. 5, М., 1994, с. 400.

ցուցել իր հայ «ես»-ի ինքնատիպ գոյաբանության անհրաժեշտությունը՝ չըրջանցելով անհատական ընկալումները: Գրողին հետաքրքրում են կերպափոխվող «ես»-երը». նա կարևորում է «ես»-ի դիմակի կերպափոխությունը:

Բլոկն էլ ուսումնասիրել է ռուս մարդու տեսակը, այսինքն՝ այդ երկու բանաստեղծներին հուզել է իրենց ազգային տեսակը: Անցյալ - ներկա - ապագա շղթայի իրատես ուսումնասիրությունն է նրանց զբաղեցրել, որի եզրահանգումը և հնարավորություն կտա սերունդներին ապագայում հավասարը հավասարի հետ քայլել այլ ազգերի ներկայացուցիչների հետ, քանի որ ակնհայտ էր, որ մարդկությունը զարգացման նոր փուլ է մտնում:

Իսահակյանը ազգային գրականության ուրույն և ինքնատիպ տեղ ու դեր ունեցող այնպիսի հեղինակ է, որն ուսումնասիրում էր հայի ինքնատիպ գոյաբանության հիմնահարցը: Նրան՝ որպես մտածողի հուզում էր ազգային քաղաքական աղետի արմատների քննությունը, և նա աշխատում էր վերլուծել դրանք, որպեսզի սերունդների առջև այլևս այդ հարցերը չծառանան:

МАСКА И ЕЕ ПРИМЕНЕНИЕ  
В ПРОИЗВЕДЕНИЯХ АВ. ИСААКЯНА

МАРИ ЗАКАРЯН

Р е з ю м е

Изменения системы ценностей 10–20-х годов XX в. привели к революциям и войнам. Свершились Первая мировая война, армянский геноцид, Октябрьская революция. На основе этих событий становится явной многоликость “эго” Запада. Великие писатели этого времени обращались к исследованию человека в маске. В русской литературе такими были В. Брюсов, А. Блок и др. В армянской литературе этого времени к исследованию многоликости “эго” обращался Ав. Исаакян.

MASK AND ITS USE IN AV. ISAHAKYAN'S WORKS

MARY ZAKARYAN

S u m m a r y

Changes in the system of valuables in the 10s-20s of the 20th century led to revolutions and wars, such as World War I, Armenian Genocide, October Revolution. On the basis of these events multiface “ego” becomes evident. Great writers of this period applied to the study of the man in mask. Among such writers in Russian literature were V.Bryusov, A.I.Blok and many others. In Armenian literature of the above-mentioned period Av.Isahakyan applied to the study of multiface essence of “ego”.